

կու սեան գլուխքն այրել է . զոր տեսեալ բազմաց՝  
 105 փառս տային Աստուծոյ . եւ մինչեւ ցայսօր երեւի տեղին բռնըված հրագոյն . զոր ծանուցին խօնթքարին . եւ նա հիացեալ հրաման եւ պարաթ զրկեց յերուսաղէմ նալաթլամայով , որ աղքատք թէ չունենան եւ երգվին թէ չունին՝ թողցեն զնոսա ի ներս , զի մի զրկեացին ի լուսոյն . զոր եւ մեք տեսաք զայն սիւնսն աչօք մերովք այրեալ եւ սեւացեալ . եւ զայն էմրն քանդեալ ի վերայ քարեայ տախտակի Յարութեան զուռն ի հրաշալիս փառաց լուսոյն . զի զիրն տաճկերէն զրած է : Դարձեալ վարդապեան յորդորէ զժողովուրդն ասելով , թէ վասն սիրուն Աստուծոյ եւ սուրբ լուսոյն խաթերն՝ տվէք ողորմութիւն , զի զայն մնացած աղքատքն ալ մտցեն ի ներս . իսկ  
 120 ողորմածք եւ զթածքն տան վաղվաղակի ըստ կարեաց եւ վճարեն զնոսա եւ մուծանեն ի ներս . եւ լինի մեծ ուրախութիւն եւ ցնծութիւն : Եւ այն զատկի զիչերն Յարութեան զուռն բաց մնայ եւ ցորեկն , զի յովով Տաճիկք  
 125 գան եւ նստին հայել զարարողութիւնս քրիստոնէից :

Իսկ աւագ հինդչարթի իրիկունն զայ չէխ մի եւ զատին , այլ եւ սուպաչին , եւ զամէն կանթեղսն շիջուցանեն . եւ Քրիստոսի զուպին  
 130 զովին մօհրեն զատին եւ սուպաչին եւ երկու չէխ . եւ եասախչիք պահնորդ զնեն . զի մի նենկութիւն կամ հիլա լինիցի . եւ մնան մինչ